ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «13» դեկտեմբերի, 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 44-Ա/Ք

«ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌԻ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ-ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019թ. օգոստոսի 30-ի N 583-Ա/2 հրամանի 3-րդ կետը, հաշվի առնելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2019թ. նոյեմբերի 04-ի N 997-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2019թ. դեկտեմբերի 09-ի նիստում հաստատված վարկանիշային ցանկը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը և ֆինանսական ծավալները՝ համաձայն հավելվածի:
2. ՀՀ գիտության կոմիտեի գիտական գործունեության կազմակերպման վարչությանը (պետ Ռուզան Ասատրյան)՝
   1) ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ իրազեկման աշխատանքները,
   2) կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը:
3. ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին (պետ՝ Տիգրան Գալստյան)՝ ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2019 թ. դեկտեմբերի 1-ից:
4. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՑԱՆԿ

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲՆԱԳԱՎԱՌԻ «ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՏԻԿ-ՈԼՈՐՏԱՅԻՆ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

Հ/հ	Ծածկագիր	Ղեկավարի Ա.Ա.Հ.	Գիտական թեմայի անվանում	Կազմակերպություն	Ֆինանսավորման ծավալ (հազ. ՀՀ դրամ)
1.	19T-5B04	Գևորգյան Ռուբեն Ալբերտի	ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	5,400
2.	19T-5B11	Հախվերդյան Դավիթ Ներսիկի	Հայաստանյան գիտահետազոտական ենթակառուցվածքների տնտեսական ազդեցության գնահատման մեթոդաբանության մշակումը	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	5,350
3.	19T-5B12	Հարությունյան Գայանե Էրնիկի	Հայկական ռազմաարդյունաբերության զարգացման հիմնախնդիրը տնտեսության մոբիլիզացիոն հնարավորությունների ընդլայնման դիտանկյունից	«ՀՀ ՊՆ պաշտպանական ազգային հետազոտական համալսարան» պետական հիմնարկ	5,250
4.	19T-5B15	Մարգարյան Ատոմ Շավարշի	Հայաստանի Հանրապետության տնտեսության գիտելիքահենք արդիականացումը Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեխնոլոգիաների փոխանցման համատեքստում	«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ	6,500